

թեան մատնուած ժողովուրդը կը փնտռէր օգնական բարեկամի մը ձեռքը: Միակ ապաւէնն էր քրիստոնեայ տարրին համար Հռոմայ Եկեղեցւոյն Հովուապետը, որուն անունը հռչակուած էր Արեւելք եւ կը վայելէր Արեւմուտք բարձր ճշմութիւն:

Հռոմի Քահանայապետները իբրեւ հովուապետ կաթողիկէ Եկեղեցւոյ ունէին իրենց ազդեցութեան տակ ոչ միայն քահանայապետական պետութեան սահմանները, այլ եւ բովանդակ կաթողիկէ աշխարհը: Եւրոպական պետութիւնները կը հետեւէին անոնց ակնարկութիւններուն, երբ մասնաւորապէս Կաթողիկէ Եկեղեցւոյ շահերը համադրածակցութիւն կը պահանջէին: Այս պատճառաւ ալ երբ առիթ ընծայուէր արեւելեայց՝ դիմել Կաթողիկէ Եկեղեցւոյ Հովուապետին՝ հայցելու քաղաքական կամ բարոյական օգնութիւն եւ պաշտպանութիւն, ուղղակի իրմէ կամ անոր միջնորդութեամբ՝ պետութիւններէ, առաջին հարցումը կ'ըլլար, թէ ի՞նչպէս է անոնց վերաբերմունքը հանդէպ կաթողիկէ Եկեղեցւոյ: Արեւելեան քրիստոնեայք կը դտնուէին տաւալին կաթողիկէ Միութենէն դուրս: Հռոմի մեծագոյն փափագն եղած էր միշտ Միութեան մէջ ունենալ արեւելեան Եկեղեցիներն ալ: Առ այս սկսեալ ԺԳ. դարէն, բայց յատկապէս ԺԶ. — ԺԷ. դարերուն հիմնարկուած էին նոր վանական հաստատութիւններ, որոնք իրենց առաքեալները կ'ուղարկէին առաջաւոր եւ հեռաւոր Արեւելք, մէկ կողմէն չմիացեալ Եկե-